



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծովի

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

5th - 6th January 2020

Bulletin 01/2020

Christmas Eve

ՏԻՏՈՍ 2:11-15

Քանի որ Աստուծոյ փրկարար շնորհքը երեւցաւ բոլոր մարդոց, կրթելով մեզ՝ որ ուրանանք անբարշտութիւնն ու աշխարհային ցանկութիւնները, եւ ապրինք խոհեմութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ՝ այս ներկայ աշխարհին մէջ, սպասելով այն երանելի յոյսին եւ մեծ Աստուծոյ ու մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի փառքին երեւումին: Ան ընծայեց ինքզինք մեզի համար, որպէսզի ազատագրէ մեզ ամէն անօրէնութենէ, եւ մաքրելով ընէ իր սեփական ժողովուրդը, նախանձախնդիր բարի գործերու:

Ըսէ՛ այս բաները, յորդորէ՛ ու կշտամբէ՛ ամբողջ հեղինակութեամբ: Ո՛չ մէկը թող արհամարհէ քեզ:

Titus 2:11-15

For the grace of God has appeared that offers salvation to all people. It teaches us to say “No” to ungodliness and worldly passions, and to live self-controlled, upright and godly lives in this present age, while we wait for the blessed hope—the appearing of the glory of our great God and Savior, Jesus Christ, who gave himself for us to redeem us from all wickedness and to purify for himself a people that are his very own, eager to do what is good.

These, then, are the things you should teach. Encourage and rebuke with all authority. Do not let anyone despise you.

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 2:1-12

Երբ Յիսուս ծնաւ Հրեաստանի Բեթլեհէմին մէջ՝ Հերովդէս թագաւորին օրերը, ահա՛ արեւելքէն մոզեր եկան Երուսաղէմ, եւ ըսին. «Ո՛ր է ան՝ որ ծնաւ իբր Հրեաներուն թագաւորը. որովհետեւ մենք տեսանք անոր աստղը՝ արեւելքի մէջ, ու եկանք երկրպագելու անոր»: Երբ Հերովդէս թագաւորը լսեց՝ վրդովեցաւ, եւ իրեն հետ՝ ամբողջ Երուսաղէմը: Ապա, հաւաքելով բոլոր քահանայապետներն ու ժողովուրդին դպիրները, հարցափորձեց զանոնք թէ ո՛ր պիտի ծնէր Քրիստոսը: Անոնք ալ ըսին իրեն. «Հրեաստանի Բեթլեհէմին մէջ: Որովհետեւ սա՛ գրուած է մարգարէին միջոցով.

“Դո՛ւն, Բեթլեհէ՛մ, Յուդայի՛ երկիր, Յուդայի կառավարիչներուն մէջ բնա՛ւ ամենափոքրը չես. որովհետեւ Կառավարիչ մը պիտի ելլէ քեզմէ, որ պիտի հովուէ իմ ժողովուրդս՝ Իսրայէլը”»:

Այն ատեն Հերովդէս ծածկաբար կանչեց մոզերը, ստուգեց անոնցմէ աստղին երեւցած ժամանակը, եւ որկեց զանոնք Բեթլեհէմ՝ ըսելով. «Գացէ՛ք, ճշգրտութեամբ տեղեկացէ՛ք մանուկին մասին, ու երբ գտնէք զայն՝ յօր բերէք ինձի, որպէսզի ե՛ս ալ երթամ՝ երկրպագեմ անոր»: Երբ անոնք թագաւորէն լսեցին այս խօսքը, մեկնեցան. եւ ահա՛ այն աստղը՝ որ տեսեր էին արեւելքի մէջ, կ'երթար անոնց առջեւէն՝ մինչեւ որ եկաւ ու կեցաւ մանուկին եղած տեղին վրայ: Երբ տեսան աստղը, չափազանց ուրախացան: Եւ տուն մտնելով՝ տեսան մանուկը, իր մօր՝ Մարիամի հետ. իյնալով երկրպագեցին անոր, ու բանալով իրենց զանձերը՝ մատուցանեցին անոր ընծաներ. - ոսկի, կնդրուկ եւ զմուռս: Ու երագի մէջ պատգամ ստանալով՝ որ չվերադառնան Հերովդէսի, ուրիշ ճամբայով մեկնեցան իրենց երկիրը:

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

Սուրբ Ծննդյան Ծրագալույցի Սբ.Պատարագ

Ծրագալույցի Սուրբ Պատարագ տարվա ընթացքում մատուցվում է երկու անգամ՝ Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության տոներին: Ըստ Հայ եկեղեցու՝ Սուրբ Ծննդյանը նախորդող մեկ շաբաթը պահոց շրջան է: Դեկտեմբերի 30-ից մինչև հունվարի 5-ի երեկոյան մարդիկ պահք են պահում: Այդ ընթացքում օգտագործվում է բացառապես բուսական ծագում ունեցող սնունդ: Սուրբ Ծննդյան տոնը սկսվում է հունվարի 5-ի երեկոյան և շարունակվում կեսգիշերից հետո:

Հունվարի 5-ի երեկոյան բոլոր եկեղեցիներում մատուցվում է Ծրագալույցի Սուրբ Պատարագ: «Ծրագալույց» նշանակում է ճրագ՝ մում, վառել (լուցանել): Այդ օրը երեկոյան, մարդիկ եկեղեցում վառած ճրագներն իրենց հետ տուն են տանում: Այն խորհրդանշում է աստվածային լույսն ու օրհնությունը: Ծրագալույցը խորհրդանշում է նաև բեթղեհեմյան աստղի լույսը, որն առաջնորդեց մոգերին դեպի Հիսուս Մանուկը:

Eve of Feast of the Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ, Candle-light (Lucernarium) Divine Liturgy

As according to the Church the day is changed at 17:00 p.m., after the evening service, the feast of the Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ starts on the eve, in the evening of January 5, and is continued after the midnight, on January 6. On the eve a solemn Candlelight Divine Liturgy is celebrated. Following the conclusion of the Liturgy, the assembled faithful take lit candles and lamps home symbolizing the divine light and the blessing of the Church. Lighting lamps symbolizes the light of the Bethlehem Star which guided the way of the magi to the baby Christ.

Christmas and Epiphany

ՏԻՏՈՍ 2:1-15

Պօղոս, Աստուծոյ ծառայ եւ Յիսուս Քրիստոսի առաքեալ՝ համաձայն Աստուծոյ ընտրեալներուն հաւատքին ու բարեպաշտութեամբ եղած ճշմարտութեան գիտակցութեան, յաւիտենական կեանքի յոյսով որ անուտն Աստուած խոստացաւ դարերու ժամանակներէն առաջ - բայց յատուկ ատենին իր խօսքը բացայայտեց քարոզութեամբ՝ որ վստահուեցաւ ինծի մեր Փրկիչ Աստուծոյ հրամանով - ,

Տիրոսի՝ հարազատ զաւակիս հասարակաց հաւատքին համեմատ. շնորհք եւ խաղաղութիւն Հայր Աստուծմէ ու Տէր Յիսուս Քրիստոսէ՝ մեր Փրկիչէն:

Ես ձգեցի քեզ Կրետէ, որպէսզի ուղղես բոլոր պակաս մնացած բաները ու երեցներ նշանակես ամէն քաղաքի մէջ՝ ինչպէս պատուիրեցի քեզի. եթէ մէկը ըլլայ անմեղադրելի, մէկ կնոջ ամուսին, եւ ունենայ հաւատարիմ զաւակներ, որոնք անառակութեան համար ամբաստանուած կան ըմբոստ չըլլան: Որովհետեւ եպիսկոպոսը՝ իբր Աստուծոյ տնտես՝ պէտք է ըլլայ անմեղադրելի. ոչ ինքնահաւան, ոչ բարկացող, ոչ զինեմոլ, ոչ զարնող, ոչ ամօթալի շահախնդրութեան հետամուտ եղող, հապա՝ հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, հաստատ բռնելով վարդապետութեան հաւատարիմ խօսքը, որպէսզի կարենայ թէ՛ յորդորել ողջամիտ վարդապետութեամբ, թէ՛ կշտամբել հակաճառողները:

Քանի որ շատ են ըմբոստները, դատարկախօսներն ու հրապուրողները, մա՛նաւանդ անոնք՝ որ թրփատութենէն են: Պէտք է պապանձեցնել զանոնք. անոնք կը կործանեն ամբողջ տուներ, եւ կը սորվեցնեն անպատեհ բաներ՝ ամօթալի շահախնդրութեան համար: Անոնցմէ մէկը՝ իրենց սեփական մարգարէն՝ ըսած է. «Կրետացիները միշտ ստախօս են, չար գազաններ, դատարկապորտներ»: Այս վկայութիւնը ճշմարիտ է. ուստի սաստիկ կշտամբէ՛ զանոնք, որպէսզի առողջանան հաւատքին մէջ, ուշադրութիւն չդարձնելով հրէական առասպելներուն ու ճշմարտութենէն խոտորող մարդոց պատուերներուն: Մաքրութիւնը՝ ամէն բան մաքուր է. բայց պիղծերուն եւ անհաւատներուն՝ ոչինչ մաքուր է, հապա անոնց միտքն ալ, խղճմտանքն ալ պղծուած են:

Titus 2:1-15;

Paul, a servant of God and an apostle of Jesus Christ to further the faith of God's elect and their knowledge of the truth that leads to godliness—in the hope of eternal life, which God, who does not lie, promised before the beginning of time, and which now at his appointed season he has brought to light through the preaching entrusted to me by the command of God our Savior,



Birth of Christ

To Titus, my true son in our common faith:


Grace and peace from God the Father and Christ Jesus our Savior.

Appointing Elders Who Love What Is Good

The reason I left you in Crete was that you might put in order what was left unfinished and appoint ^a elders in every town, as I directed you. An elder must be blameless, faithful to his wife, a man whose children believe ^b and are not open to the charge of being wild and disobedient. Since an overseer manages God's household, he must be blameless—not overbearing, not quick-tempered, not given to drunkenness, not violent, not pursuing dishonest gain. Rather, he must be hospitable, one who loves what is good, who is self-controlled, upright, holy and disciplined. He must hold firmly to the trustworthy message as it has been taught, so that he can encourage others by sound doctrine and refute those who oppose it.

Rebuking Those Who Fail to Do Good

For there are many rebellious people, full of meaningless talk and deception, especially those of the circumcision group. They must be silenced, because they are disrupting whole households by teaching things they ought not to teach—and that for the sake of dishonest gain. One of Crete's own prophets has said it: "Cretans are always liars, evil brutes, lazy gluttons."^c This saying is true. Therefore rebuke them sharply, so that they will be sound in the faith and will pay no attention to Jewish myths or to the merely human commands of those who reject the truth. To the pure, all things are pure, but to those who are corrupted and do not believe, nothing is pure. In fact, both their minds and consciences are corrupted.



Wise men following a shining star to Jesus

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 1 :18-25

Յիսուս Քրիստոսի ծնունդը եղաւ սա՛ կերպով: Անոր մայրը՝ Մարիամ, Յովսէփի նշանուած, Սուրբ Հոգիէն յղացած գտնուեցաւ՝ դեռ իրարու քով չէկած: Յովսէփ՝ անոր անուսինը, արդար մարդ ըլլալով, ու չուզելով որ խայտառակէ զայն, կը ծրագրէր ծածկարար արձակել զայն: Մինչ ան ա՛յդպէս կը մտածէր, ահա՛ Տէրոջ հրեշտակը երեւցաւ անոր՝ երազի մէջ, եւ ըսաւ. «Յովսէփ, Դաւիթի՛ որդի, մի՛ վախնար քովդ առնել կինդ՝ Մարիամը, որովհետեւ անոր մէջ յղացուածը Սուրբ Հոգիէն է: Ան պիտի ծնանի որդի մը, եւ անոր անունը Յիսուս պիտի կոչես, քանի որ ա՛ն պիտի փրկէ իր ժողովուրդը իրենց մեղքերէն»: Այս ամէնը կատարուեցաւ, որպէսզի իրագործուի մարգարէին միջոցով ըսուած Տէրոջ խօսքը. «Ահա՛ կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի, եւ անոր անունը Էմմանուէլ պիտի կոչեն», որ կը թարգմանուի՝ Աստուած մեզի հետ: Յովսէփ քունէն արթննալով ըրաւ ինչ որ Տէրոջ հրեշտակը հրամայեց իրեն, եւ քովը առաւ իր կինը: Ու չզիսցաւ զայն՝ մինչեւ որ ան ծնաւ իր անդրանիկ որդին. եւ անոր անունը Յիսուս կոչեց:

Matthew 1:18-25;

Joseph Accepts Jesus as His Son

This is how the birth of Jesus the Messiah came about ^d: His mother Mary was pledged to be married to Joseph, but before they came together, she was found to be pregnant through the Holy Spirit. Because Joseph her husband was faithful to the law, and yet ^e did not want to expose her to public disgrace, he had in mind to divorce her quietly.

But after he had considered this, an angel of the Lord appeared to him in a dream and said, "Joseph son of David, do not be afraid to take Mary home as your wife, because what is conceived in her is from the Holy Spirit. She will give birth to a son, and you are to give him the name Jesus, ^f because he will save his people from their sins."

All this took place to fulfill what the Lord had said through the prophet: "The virgin will conceive and give birth to a son, and they will call him Immanuel" ^g (which means "God with us").

When Joseph woke up, he did what the angel of the Lord had commanded him and took Mary home as his wife. But he did not consummate their marriage until she gave birth to a son. And he gave him the name Jesus.

Սուրբ ծնունդ և Աստվածահայտնություն

Հունվարի 6-ին Հայ Առաքելական եկեղեցին նշում է Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան ու Աստվածահայտնության տոնը, որը Հիսուսի Սուրբ Ծննդյան և մկրտության հիշատակումն է: Աստված մարդացավ և հայտնվեց մարդկանց: Քրիստոսի մկրտության ժամանակ Հայր Աստված վկայում է. «Դա է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճությունը» (Մատթ. 3:17, Մարկ. 1:11, Դուկ. 3:22) և Սուրբ Հոգին աղավանակերպ իջնում է Քրիստոսի վրա: Տեղի է ունենում երկրորդ աստվածահայտնությունը: Այսպիսով, Քրիստոսի Ծննդյան և Մկրտության միջոցով հաստատված երկու աստվածահայտնությունները եկեղեցում տոնում են միասին՝ հունվարի 6-ին «Հայտնություն» կամ «Աստվածահայտնություն» ընդհանուր անվամբ:

3: This week's message from our Priest in Charge

Հունվարի 6-ի առավոտյան մատուցվում է Սուրբ Պատարագ, որից հետո՝ կատարվում է Ջրօրհների կարգ (ըստ ավանդույթի՝ խաչը ջուրն իջեցնելը խորհրդանշում է Հիսուսի Հորդանան գետը մտնելը): Պատարագիչը խաչով, ապա մյուռոնով օրհնում է ջուրը և հավատացյալներն այդ ջրից տուն են տանում, որպես օրհնություն ու բուժիչ դեղ հիվանդների համար: Այնուհետև քահանան այցելում է հավատացյալների տներն՝ ավետելու Հիսուս Քրիստոսի Ծնունդը: Այստեղից էլ առաջացել է Տնօրհների կարգը:

Հիսուսի ծնունդն այսպես եղավ: Օգոստոս կայսեր հրամանով կայսրությունում մարդահամար անցկացվեց: Յուրաքանչյուր ոք գնաց իր ծննդավայրը՝ գրանցվելու: Հովսեփն էլ Սուրբ Կույս Մարիամի հետ Բեթղեհեմ եկավ: Երբ Սուրբ Կույսի հղության օրերը լրացան, և ոչ մի պանդոկում գիշերելու տեղ չգտնվեց, նրանք ստիպված մի քարայրի մեջ տեղավորվեցին, ուր ծնվեց Հիսուսը: Աստուծո Որդին մի անփառունակ քարայրում՝ աղքատության մեջ ծնվեց, ինչը մեր հոգիների ճշմարիտ խորհրդանշանն է: Ծննդյան վկաները մոտակայքի հովիվներն էին, որոնց հրեշտակներն էին տեղեկացրել Փրկչի Սուրբ Ծննդյան մասին՝ երգելով. «Փառք Աստծուն՝ բարձունքներում և երկրի վրա խաղաղություն և հանություն՝ մարդկանց մեջ» (Գուկ. 2:14): Այնուհետև արևելքից եկան մոգեր, ում մի աստղ էր առաջնորդել, և երկրպագեցին Մանուկին, ընծաներ մատուցեցին ու գնացին իրենց երկրները:

Feast of the Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ

Each year, on January 6, the Armenian Apostolic Church celebrates the Feast of the Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ, which is the commemoration of the Birth and Baptism of Jesus Christ. God was incarnated and appeared to the people. During the Baptism of Jesus God the Father said, “This is my Son, whom I love; with him I am well pleased” (Mt 3:17) and the Holy Spirit descended on Christ in the form of dove, so God appeared to the people for the second time. So, both Theophanies revealed by means of the Birth and Baptism of Jesus Christ are celebrated in the Armenian Church jointly on January 6. The feast starts on the eve, in the evening of January 5, and is continued after the midnight. On the eve a solemn Candlelight Divine Liturgy is celebrated and on January 6 a solemn Divine Liturgy is celebrated. At the conclusion of the Divine Liturgy Blessing of the Waters Service is conducted symbolizing the Baptism of Christ in the River Jordan at the commencement of His ministry. By means of His Baptism Jesus blessed water.

Celebrant priest pours out the Holy Chrism drop by drop into water and blesses the water. According to the tradition people take some blessed water with them to use it as a medicinal remedy for the sick. After Blessing of the Waters Service the priests visit the houses of the faithful to proclaim the Christmastide Good News of the Birth of Jesus Christ and hence the tradition of Blessing of the Houses was formed. The Birth of Jesus happened in this way. “In those days Caesar Augustus issued a decree that a census should be taken of the entire Roman world. ... And everyone went to his own town to register. So Joseph also went up from the town of Nazareth in Galilee to Judea, to Bethlehem the town of David, because he belonged to the house and line of David. He went there to register with Mary, who was pledged to be married to him and was expecting a child. While they were there, the time came for the baby to be born, and she gave birth to her firstborn, a son. She wrapped him in cloths and placed him in a manger, because there was no room for them in the inn.” (Lk 2:1-7) The Son of God was born in poverty, in a manger. The witnesses of His Birth were the shepherds living out in the fields nearby, whom the angels had appeared and brought the good news of the Birth of the Savior singing: “Glory to God in the highest, and on earth peace to men on whom his favor rests.” (Lk 2:18)

Soon afterwards some men who studied the stars came from the East and worshipped Baby Christ, presented him gifts and returned to their countries.

Մեկնություն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

«*Լոյսը եկաւ աշխարհ...»* (Յովհ. 3:19)

Միրելիներ, սիրուած եւ սպասուած Սուրբ Ծննդեան տօնն է, Փրկչի սուրբ եւ սրբագործող ծնունդը: Բոլոր մարդիկ, կամայ թէ ակամայ, լոյսի փնտրտուքն ունեն: Չգացել էք կեանքում երբեւէ այնպիսի պահ, երբ թուացել է, թէ ամեն բան վատ է, անյոյս եւ անելք, կարծես ոչ մի լոյս չի երեւում: Կեանքի նպատակի գոյութենական հարցից մինչեւ կենցաղային մանր խնդիրներ մենք փնտրողներ ենք, եւ երջանիկ են այն մարդիկ, որոնք պատասխանը գտնում են: Այսօր մենք կարող ենք դառնալ այդ երջանիկ գտնողները, եթէ մինչ այս արդեն չենք յայտնաբերել Նրան: Չէ՞ որ աշխարհի Լոյսն աշխարհ եկաւ, որ փարատի մեր բոլոր խաւարները: «*Այդ լոյսն էր ճշմարիտ լոյսը, որ լուսաւորում է ամէն մարդու, որ գալու է աշխարհ»* (Յովհ. 1:9): Ոչ միայն Իր ժամանակի մարդկանց, այլ բոլոր յետոյ եկողներին եւս, որոնց մէջ նաեւ մենք ենք: Մենք էլ պարզասիրտ եւ պարզ հոգի դառնալու պէտք ունենք, որ նմանուենք հովիւներին, որոնց

Աստուած արժանի համարեց առաջինն ակտել Փրկչի ծնունդը: **«Տիրոջ հրեշտակը երեւաց նրանց, Տիրոջ փառքը ծագեց նրանց շուրջը..»** (Դուկ 2:9): Որքա՜ն մարդիկ կան, որ ամբողջ իրենց հոգեւոր կեանքի ճամփորդութեան մէջ նման պահեր են փնտրում, երբ Աստուած իրենց ինչ-որ մասնաւոր նշանով, երագով, տեսիլքով պիտի յայտնուի եւ այդպէս էլ չեն ունենում նման պահեր: Եւ ահա այստեղ հովիւների պէս անուս, անգէտ եւ պարզ մարդիկ են ստանում նման փառաւոր յայտնութիւն՝ հրեշտակ, որ ակտում է Մանուկ Յիսուսի ծնունդը եւ հրեշտակների գնդեր, որոնք փառարանական երգեր են երգում: Խոստովանենք, որ աստուածային գեղեցկութեան եւ ներշնչումի բոլորովին այլ հրաշալի պատկեր է սա, որ չի կարող անտարբեր թողնել ոչ մի սիրտ եւ հոգի:

Աստուած մեզանից այնպիսի սիրտ եւ հոգի է ուզում, որ պիտի կարծես իւրատեսակ մտոր դառնայ՝ պարզ, խոնարհ, առանց զարդարանքների:

«Սիրտ սուրբ եւ խոնարհ հոգի Աստուած ոչ արհամարիէ» (Սաղմ. 50:19): Սա է, որ ակտորդութիւններից ազատում է մեր հոգեւոր ասպարէզը, մաքրում մեր հոգու տեսողութիւնը՝ Յիսուսին տեսնելու եւ ճանաչելու մեր ծուխի որեւէ անդամի, պանդուխտ մէկի, աղքատի, հիւանդ մանուկի, տարեց կոյրի կամ անդամալոյծի մէջ: Հովիւները չբարարութեան հրեշտակներին տեսնելով եւ լսելով, ըստ հրեշտակի խօսքի եկան Բեթղեհէմ եւ գտան Մարիամին, Յովսէփին եւ մտորի մէջ դրում նորածին Մանկանը: **«Եւ ճանաչեցին նրան այն խօսքից, որ իրենց ասուել էր Մանկան մասին** (Դուկ. 2:17): Ծատ մարդիկ են դէմ առ դէմ Քրիստոսին հանդիպել ու տեսել, բայց Նրա մէջ չեն ճանաչել Մեսիային՝ Օծեալ Փրկչին:

Այսօր սուրբգրային ընթերցումների միջից մեզ ակտի ճանաչելի է դառնում նա՝ խոստացեալ Քրիստոսը, որին դարեր սպասում էին: Բայց միայն լսելն ու իմանալը, գիտելիքը դեռ բարարար չէ, այլ դրանից բխող քայլն է իմաստաւորում գիտեցածը:

«Եւ հովիւները վերադարձան. փառաւորում եւ օրհնում էին Աստծուն այն ամենի համար, որ լսեցին ու տեսան, ինչպէս իրենց պատմուել էր» (Դուկ. 2: 20): Հովիւները լսածից ու տեսածից զօրացան հաւատքի մէջ, երբ վերադարձան իրենց տեղերը ՓԱՌԱԲՈՐՈՒՄ ԵՒ ՕՐՀՆՈՒՄ ԷԻՆ ԱՍՏԾՈՒՄ: Ամէն տարի հաւատացեալները եւս Քրիստոսի Սուրբ Ծննդեան երգերով ու ակտիսներով բարձրաձայնում են, տարածում այդ Բարի Լուրը: Բայց, ցաւոք, ոչ բոլոր մարդիկ են արձագանքում դրական: Մեր ժամանակի շատ մարդկանց համար անընդունելի եւ արհամարիելի է այս, ինչի մասին Յովհաննէս առաքեալն էլ է գրում. **«Լոյսը եկաւ աշխարհ, սակայն մարդիկ խաւարն ակտի սիրեցին»** (Յովհ. 3:19): Ծատերի համար իրենց իսկ կամքով այդպէս էլ անճանաչելի մնաց Յիսուս. **«Նա աշխարհի մէջ էր, եւ աշխարհը նրանով եղաւ, սակայն աշխարհը նրան չճանաչեց»** (Յովհ. 1:10):

Ի՞նչ է պէտք, որ ճանաչենք Յիսուսին:

Աստուած հոգի է, եւ Նրան ճանաչելու համար մեր ջանքն ու քայլերն էլ հոգեւոր են:

Սուրբ Ծննդեան առիթով մեր տներն ենք մաքրում՝ հիւր ընդունելու համար, հարկ է, որ նաեւ մեր սրտերը մաքրենք՝ Յիսուս Մանկանն ընդունելու համար: Սուրբ Ծնունդի առիթով իրար առաջ սեղաններ ենք բացում, հարկ է նաեւ, որ մեր սիրտն ու հոգին բացենք Փրկչի առաջ: Յաճախ նոր հագուստներ ենք հագնում այս առիթով, հարկ է նաեւ, որ Քրիստոսի նկարագիրը եւս հագնենք մեզ վրայ, Քրիստոսով զգեստաւորուենք, ինչպէս Պօղոս առաքեալն է ասում: Փորձում ենք շատ բաներ նորոգել մեր տանը, կարելու է նաեւ, որ Քրիստոսի աշխարհ բերած նորոգութիւնն ընդունենք մեր կեանքից ներս: Սուրբ Ծննդեան գեղեցիկ ակտիւոյթ է իրար նուէրներ տալը, հարկ է, որ գիտակցարար մեր կեանք ընդունենք նաեւ Յիսուսի՝ մեզ նուիրած փրկութեան պարգեւը: Սուրբ Ծննդեան տօնական օրերին յիշում ենք հեռու-մօտիկ մեր բարեկամներին եւ հարազատներին, զանգ տալիս, շնորհաւորական բացիկ փոխանցում այցելում նրանց, պէտք է, որ միշտ յիշենք, որ պատճառը Աստծոյ սէրն է, Մանուկ Յիսուսի աշխարհ գալը եւ սիրոյ թագաւորութեան հրաւերը տալը բացառապէս բոլորին՝ առանց խտրականութեան: **«Ո՛ր է հրեաների արքան, որ ծնունդ, որովհետեւ նրա աստղը տեսանք արեւելքում եւ եկանք նրան երկրպագելու»** (Սաղթ. 2:2): Մենք մեր ժամանակի մէջ եւս մեր յարմարաւետութիւնից դուրս գանք, ուզենք տեսնել Փրկչին, փնտրենք եւ գտնենք Յիսուսին մեր կեանքում: Մոզերի փնտրտուքը գուտ յետաքրքրասիրութիւն չէր, նրանց նպատակը ՄԱՆՈՒԿ ՅԻՍՈՒՍԻՆ ԵՐԿՐՊԱԳԵԼԸ ԷՐ: Հեշտ եւ հասկանալի է, երբ խոնարհուում են փառաւոր գահին նստած թագաւորի, բայց դժուար է անշուք եւ պարզ խոտէ օրորոցի մէջ ճանաչել խոստացեալ Փրկչի Արքային, խոնարհուել, երկրպագել եւ թագաւորական ու քահանայական նուէրներ տալ: Մենք էլ երբեմն ընդունում մտածողութեամբ փառաւոր, պերճաշուք կերպով ենք պատկերացնում Երկնքի Թագաւորին, բայց Փրկչին Իր Սուրբ Ծնունդով կամաւորապէս խոնարհուելու, մտորի պէս պարզ եւ խոնարհ միջավայրում լինելու կամքը յայտնեց՝ կարծես մեզ էլ սովորեցնելով, որ Ինքը բնակւում է խոնարհ հոգիներում:

Եկէք այսօր մենք եւս մեր ներսը դատարկենք ամէն տեսակ կասկածից, թերահաւատութիւնից ու անհաշտութիւնից, դառնանք հովիւների եւ մոզերի պէս Տիրոջ լոյսի ետեւից քայլող, հրաշքների գիշերը հրեշտակներին ականատես եւ ականջալուր: Բայց դա պիտի տանի նրանց պէս օրհնելուն, փառաւորելուն եւ երկրպագելուն Նրան, որ Ա՛փան ու Օճեալն է, Սկիզբը եւ Վախճանը, որ այժմ մեզ եկաւ Մանուկ Յիսուսի մէջ, Ում փառք յաւիտեանս, ամէն:

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

**ԱՌԱՋՆՈՒՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԻԱՅԵԱԼ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐԼԱՆՏԱՅԻ
DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF THE UNITED KINGDOM AND IRELAND**

**Տ. Հովակիմ Եպս Մանուկյան, Հայրապետական Պատուիրակ և Առաջնորդ
The Right Revd Bishop Hovakim Manukyan, Primate and Pontifical Legate**

2nd December 2019

Dear Faithful,

Annual Advent Appeal:

At this most festive season of the year, I greet you with Christ's love and hope that you and your family are in good health and spirits.

It was thanks to your support and the contribution of benefactors like yourselves that our Church has been able to fund the activities, projects and programmes of the Armenian Church in the UK and Ireland. Thanks to all of those who have helped and supported the church throughout the year, we have been able to continue offering our Church's educational, pastoral, youth and other programmes.

The Bishops House, the diocesan headquarters (Առաջնորդարան) established last year continues to play a pivotal role in organising and implementing a range of religious, educational, cultural and social activities throughout the Diocese.

Your personal support and financial contribution will ensure the continuation of our ministry through the various programmes of our Diocese. The Diocesan Budget including expenditure for maintaining the activities of the Bishop's House – Առաջնորդարան, indicate a short fall of approximately £ 34 K. To this end to we depend heavily on your support and generosity to keep reaching out to every Armenian in the UK through our programs and the Diocesan centre activities.

I appeal to you personally to make a contribution that will help us implement the programs we have established, such as: the Children's Club; the Art and Wellbeing for Women; the Armenian Connections for Young Professionals; lectures and workshops on social and ethical issues, the Armenian Book club, Bible Studies, various youth programs – Christmas Carols, Christmas & Eastern basket deliveries to the elderly, Armenian Youth House, Youth Pilgrimages to Armenia and Artsakh, Mission Parish Outreach.

I thank you for reading this appeal and look forward to hearing your positive response to this appeal. This annual appeal is one of the ways through which the faithful of the Armenian Church take part in the ministry of the diocese through their contributions.

May our Lord Jesus Christ bless you and your family with his abundant gifts at this most joyous Advent Season.

With Prayers

Bishop Hovakim Manukyan
Primate

**Ս. ՆՆՆԴԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ**

- 05.01.2020 Կիր. – Սբ. Ննդեան ճրագալոյցի Սբ. Պատարագ** Ժ. 16:30
Սբ. Եղիշեում, (Պորգչ` Յ. Գրիգորիս) **Արաւոտեան Սբ Պատարագ տեղի պիտի չունենայ**
- 06.01.2020 ԲՇ., ՍՈՒՐԲ ՆՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱՅՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ**, Սբ. Պատարագ Ժ.10:30
Սբ. Եղիշեում, (Պորգչ` Յովակիմ Սրբ.), աւարտին` ճաշկերոյթ
- 06.01.2020 ԲՇ., ՍՈՒՐԲ ՆՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱՅՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ** Ժ.14:30
Յաւարտ պատարագի գոհաբանական Սուրբ Ննդեան ճաշ` կազմակերպուած Սուրբ Եղիշե Եկեղեցու տիկնանց միութեան կողմից

NEW YEAR, ADVENT & CHRISTMAS TIME TABLE

- 05.01.2020 Sunday.** – Christmas eve Mass 16:30 pm **There will not be any morning service**
St Yeghiche Church (Celebrant` Fr. Grigoris)
- 06.01.2020 Monday.,** Theophany and Epiphany 10:30 am
St Yeghiche (Celebrant Bishop Hovakim)
- 06.01.2020 Monday.,** Theophany and Epiphany 14:30 pm
At the end of divine liturgy, thanksgiving Christmas Lunch organised by the St Yeghiche Armenian Church Ladies Guild

Why should I support my Church?

The following appeared in the last Armenian Church Bulletin issued by the Diocese. It should concern all of us individually. Please read and consider your position.

At the annual meeting of the Armenian Church Trust (ACT) on Monday 2 December, the activities of the Armenian Church in the United Kingdom were presented, many of which have been described in previous bulletins. **One point that became clear was the increased scope and depth of the programs was made possible by the resources and opportunities of the new Arachnortaran guided by the Bishop and his active supporters.**

It was not a solo speech by the Bishop: those involved with the youth activities, Bible Studies, the Street Festival and lectures participated with their aspirations for the future. **Truly, our church is active and broadening its mission.**

There is, however, a negative aspect to this success that all community members should be aware of. **The Armenian Church Trust (ACT) is running a significant deficit amounting in the last accounts to £35,000. All this is only possible with the right level of funding.**

Currently reserves are being drawn but this cannot continue. Either the right level of financial support is forthcoming or the program has to be cut down significantly.

The situation is not confined to the overall diocesan level: it affects the individual parishes as well. Currently, the two London parishes have between them only less than 400 parishioner members whose annual dues have to support all their activities including church services. They too are having difficulties maintaining their work, let alone expand it. The 400 is such a small proportion of the community with a size of 14,000.

There is a prevailing view over many years that rich benefactors and trusts will give the necessary monies. That might have been true at one time, but no longer: the church needs continuous, dependable and consistent regular income from more sources.

Our clergy always stress to us that the church is not just the building, the clergy and the church services: it exists and thrives only through its congregations. **It is vital that the community does participates with their time and money to the church, without believing complacently that a few wealthy donors can be called on.** The church needs all its adherents and should not be restricted to such a small set of active people.

So when you enter a church for a service expecting the doors to be open, the building to be lit up and heated, a priest at the altar, candles in the vestry, a choir and organist performing - think of what it takes to make all this happen. We must not take all this for granted.

Firstly, please become a parishioner for one of the churches who will appreciate the generosity of your regular dues. Small annual amounts by many add up to a worthwhile level. The income from weddings and baptisms is not the reliable basis for sustained parish activities.

Secondly consider giving additional donations either to the parish or the ACT to sustain a thriving church in all its aspects. Do not just dip in and out of the church when you come expecting others to provide – you are an important member of the church too.

This is an issue for all the community and should not be avoided. Thank You

Please ask at St Yeghiche Church Desk for a copy of an application to register with our Parish.

4: Հոգեհանգիստ - Memorial Service

No Memorial Service today

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

Welcome to St Yeghiche Armenian Church Parish. We are delighted that you have made St Yeghiche Armenian Church your spiritual home. Please register your name and email address with Parish Council to receive announcements from St Yeghiche Armenian church.

Please provide your details to any Parish Council Member, alternatively you may send it to: info@styeghiche.org.uk

Thank you. St Yeghiche Armenian Church Parish Council.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.